

«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ
Հաստատված է գիտխորհրդի (26.06.2009թ.)
նիստում (արձանագրություն թիվ 6_) գիտխորհրդի
նախագահ _____ Գ.Կ.Խաչատրյան

Կանոնակարգ հեռակա բաժնի ուսանողների շարժի հետ կապված վարձավճարների սահմանման

1. Երկրորդ մասնագիտություն ստացող ուսանողը վճարում է այն կուրսի վարձավճարը, որից սկսում է ուսումնառությունը: Ուսուցիչ աշխատող ուսանողն օգտվում է համապատասխան արտոնությունից:
2. Մեր բուհի կամ այլ բուհերի առկա ուսուցումից հեռակա ուսուցման փոխադրվող ուսանողը վճարում է հեռակա ուսուցման տվյալ մասնագիտության համար սահմանված վերջին վարձավճարը: Բացառություն են կազմում մինչև 3 տարեկան երեխա ունեցող և զինծառայությունից վերադարձած ուսանողների փոխադրումները, որոնց դեպքում ուսանողը վճարում է հեռակա ուսուցման տվյալ կուրսի (որում շարունակում է ուսումնառությունը) համար սահմանված վարձավճարը:
3. Այլ բուհերի հեռակա ուսուցումից մեր բուհի հեռակա ուսուցման փոխադրվող ուսանողը վճարում է հեռակա ուսուցման տվյալ մասնագիտության համար սահմանված վերջին վարձավճարը:
4. Մեր բուհի և այլ բուհերի առկա կամ հեռակա ուսուցումից հեռացված և հետագայում ուսանողական իրավունքները հեռակա ուսուցման համակարգում վերականգնող ուսանողը վճարում է հեռակա ուսուցման տվյալ մասնագիտության համար սահմանված վերջին վարձավճարը:
5. Նույն կուրսում կրկնակի ուսուցման դեպքում ուսանողը վճարում է տվյալ կուրսի (որում շարունակում է ուսումնառությունը) համար սահմանված վարձավճարը:
6. Տարկետումից վերադարձող ուսանողը վճարում է պայմանագրում նշված վարձավճարը:
7. Մինչև 2004-05 ուս. տարին ընդունված առկա ուսուցման պետպատվերի համակարգից հեռակա ուսուցման փոխադրվող ուսանողը վճարում է տվյալ կուրսի (որում շարունակում է ուսումնառությունը) համար սահմանված վարձավճարը:
8. Տարկետումից և զինծառայությունից վերադարձած ուսանողը, որի ուսանողական իրավունքները վերականգնվում են հարակից մասնագիտությամբ (տվյալ տարում իր մասնագիտությամբ ուսուցում չլինելու պատճառով) վճարում է նախկին պայմանագրով սահմանված վարձի վճարը: